Ծնվել է 1979 թվականի հունվարի 15-ին Երևանում:

1995թ ավարտել է Երևանի թիվ 160 միջնակարգ դպրոցը:

2000թ ավարտել է Երևանի «Գալիք» համալսարանի իրավագիտության ֆակուլտետը «Իրավագիտություն» մասնագիտությամբ (սահմանադրական իրավունք մասնագիտացմամբ) և պետական քննական հանձնաժողովի

10.12.2000թ որոշմամբ ստացել իրավագետի որակավորում:

1997-1999թթ ծառայել է ՀՀ ազգային բանակում (զորացրվել է ավագ սերժանտ կոչումով):հանձնաժողովի անդամ:

1999-2002թթ Սյունիքի մարզի Գեղի համայնքի ղեկավարի օգնական:

2001-2002թթ համատեղության կարգով «Սեղի Լաս» ՍՊԸ իրավաբան:

2002թ ՀՀ Առողջապահության նախարարության «Պրոֆ. Ռ.Հ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ՝ աշխատակազմի ղեկավար:

2002-2004թթ ՀՀ մշակութի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմում՝ ռազմամոբիլիզացիոն և քաղաքացիական պաշտպանության գծով գլխավոր մասնագետ:

2004-2008թթ տարբեր իրավապաշտպան կազմակերպություններում ծրագրերի ղեկավար, համակարգող, իրավաբան, ուսուցանող, իրավախորհրդատու:

2008թ-ից ՀՀ ոստիկանության Ճանապարհային ոստիկանության ծառայության իրավաբանական բաժնում՝ իրավախորհրդատու, տեսուչ, ավագ տեսուչ, ՀԿՀ ավագ տեսուչ, ներկայում՝ ՃՈ ՏՄՀԻՎԳՔ բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ:

2022թ. հոկտեմբերի 7-ին ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ ընտրվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ:

<u>Դասավանդման փորձ</u>

2000-2012թթ «Հայաստանի երիտասարդ առաջնորդների դպրոց» ծրագրի դասախոս:

2006թ-ից ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների մասնագիտական դասընթացների ուսուցանող, հանձնաժողովների նշանակված անդամների վերապատրաստող:

2013թ-ից «ՀՀ փաստաբանական դպրոց» հիմնադրամի դասախոս, ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանների վերապատրաստող: 2019թ-ից ՀՀ ոստիկանության կրթահամալիրի դասախոս:

Հասարակական գործունեություն

1999-2008թթ զբաղվել եմ իրավապաշտպան-հասարակական գործունեությամբ, մի շարք, նաև միջազգային ծրագրերի հեղինակ և ղեկավար, «Արդարություն» երիտասարդական ՀԿ հիմնադիր նախագահ, Հայաստանի երիտասարդության ազգային խորհրդի (ՀԵԱԽ) նախագահության անդամ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան> ծրագրի Շահառուների խորհրդի անդամ, Հայաստանում ուռուցքաբանության զարգացման ազգային հիմնադրամի համահիմնադիր: Մասնակցել եմ մի շարք տեղական ու միջազգային կրթական ծրագրերի, այնուհետև ուսուցանել: Մասնակցել եմ մի շարք իրավական ակտերի նախագծերի մշակմանը:

2020թ. որպես ՃՈ կամավորականների հրամանատար, մասնակցել եմ 44-օրյա պատերազմին:

Խրախուսանքներ

ՀՀ ոստիկանության պետի կողմից 2012թ.՝ «Ճնորհակալություն», 2018թ.՝ «Ոստիկանության 100 ամյակ» մեդալ, 2020թ.՝ «Ոստիկանությունում գերազանց ծառայության համար» կրծքանշան:

ՀՀ ոստիկանության պետի տեղակալի կողմից 2010թ. «Միանվագ դրամական խրախուսում»:

ՀՀ ԵԿՄ կողմից 2015թ. պատվոգիր:

Ամուսնացած է, ունի որդի և դուստր: